

ԺՈՂՈՎՈՒՐԳԻ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒՐՈՊՈՅ



Եթէ աչք մը տամք արեւելեան Եւրոպիոյ, կը տեսնեմք անդ երեք մեծագոր տէրութիւններ, որ բաժնած են իրարու մէջ այն ընդարձակածաւալ երկիր տիրելով անբաւ ժողովուրդներու: Մինչդեռ արևմտեան Եւրոպիոյ ամեն ազգերն զանազան ժամանակ կերպաբանափոփոթեամբ բաժանեցան իրար մէ կամ 'ի մի ձուլեցան, արեւելոյք իրարու վրայ զիջուած մնացին առանց զիրար եղծանելու, վերջի եկողն առաջ նոյն վրայ գոգցես ծանրանալով: Այս ամեն ազգերն որ կը տարածուին 'ի Պալմիկ ծովէ մինչև յԱղբիական և յԱրշակղազո՞՞ բարոյական շարժման մէջ են, որոնք բունութեամբ իրաց ներկայ վիճակին հնազանդած են. և կը ջանան մեծածիղճ եռանդեամբ բարգաւաճել ու յառաջագիմել 'ի գիտութիւնս և 'ի քաղաքականութեան. որովք միայն կրնան երևել յայխարհի իբրև արժանաւորք առանձին ազգութեան և թագաւորութեան:

Եթէ ձեռքերնիս Եւրոպիոյ աշխարհացոյց տախտակ մ'առնումք և քննեմք նոյն ժողովրդոց բնակած աշխարհաց տեղագրական ձևը, կը տեսնեմք անդ լեռանց երկու մեծամեծ շղթաներ. առաջին շղթայն կ'ըսուի դանուբեան Ալպեայք, որ շարունակութիւն են վերին իտալիան շրջապատող կիսաբլուր մեծ շղթային, և ձգին ընդ երկայնութիւն Աղբիականի, բաժնուելով յերկուս երկրորդական շղթայս, որոց մին կը վերջանայ 'ի վերջին ծայր հելլենական թեթաղզոյն և միւսն 'ի վոսփոր: Իսկ երկրորդ շղթայն կոչի կարպաթեան լեռինք, որ կը բաժնեն Եւրոպիոյ հիւսիսակողման չուրերն 'ի հարաւակողմանց, և ապա թողով այս բաժանման դիժը՞ կը մերձենան 'ի Դանուբ գետ, իլանն.

լով 'ի հարաւակողմն Եւրոպիոյ, և ապա կը շեղին յանկարծակի յարևմուտս: Այս լեռանց երկուց շղթայից հորիզոնին և միջանկեալ լայնածաւալ հովտաց մէջ կը բնակին գոգցես իրարու վրայ զիջուած զանազան ազգեր ու ժողովուրդներ, որոնք ամենքն միահամուռ ութ զանազան ցեղ կը բաժնուին: Սլաւք՝ որ բազմաթիւ ու բազմախառն են, և աւելի ցրուեալ քան զայլս, վասն զի շատ մը առանձին խումբեր կամ ընտանիքներ կը ձևայրնեն. ապա կու գան Ռումէնք, Գերմանացիք, Մաճարք, Յոյնք, Բուլղարք, Թուրքք և Ալպանիացիք, որոց իւրաքանչիւրն թէպէտ իրեն առանձին լեզուն ունի, բայց շատերն մի և նոյն մայր լեզուէ յառաջ եկած են:

Չեքք, որ Սլաւ ցեղի խումբ մ'են, գրեթէ 5,000,000 հոգի են՝, մէկտեղ համընդրուելու Չեքերը կամ զՊոհնիացիս որք են 3,200,000, զՄորաւիացիս 1,500,000 և զԳլեգիացիս՝ 150,000 յԱւստրիա և 150,000 'ի Բրուսիա, որք կը գրաւեն զՊոհնիա, զՄորաւիա և զԳլեգիա: Սլովաքներն որոց թիւը 2,200,000 է և կը բնակին 'ի հիւսիսակողմն Հունգարիոյ, 'ի վերայ սահմանացն Մորաւիոյ, կրնանք Չեքաց հետ մէկտեղ հաշուել. յաւելլով սսոնց վրայ և զՊուսպս՝ որք գրեթէ 200,000 հոգի են, և կը բնակին 'ի Լուսատիա:

Ասոնցմէ ետքը կու գան Լեհք, որոց թիւը գրեթէ 3,000,000 է, և կը գրաւեն կալիցիան, Բողէն դաւատը որ 'ի Բրուսիա, և Լեհաստանի հին սուսական թագաւորութեան երկիրը: Լի-

1 Գրած եմք հօս ըստ կարգի բազմութեան բնակչաց. և եթէ տեսնայ ընթերցողն զԳերմանացիս ևս սսոնց կարգին մէջ, յայտնի գիտնայ որ կուզեմք իմանալ գերմանական ցեղին մեկ մասը միայն, այսինքն զԳերմանացիս Աւստրիոյ: Արեւմտ յաւելլուլ սստ և զԳերմանացիս թագաւորութեան Բրուսիոյ, 'ի պատճառս բրուսական Լեհաստանի, բայց այս թագաւորութիւնն սստ ուղղակի կերպով կը մտնայ մեր խօսից մէջ: 2 Ժողովրդոց թիւն մանրամասն վիճակագրական քննութեամբ Ծոյքեալ ըլլալուն՝ ընդհանուր կերպով գրած եմք:

Թուանացիք՝ որոց թիւը 1,700,000 է, կը բնակին 'ի Լիթուանիա Ռուսիոյ և խառնուած են Լեհաց հետ, և կարծես 'ի մի ձուլեալ: Կրնամք յիշատակել զարձեալ աստ զԳրորիսկեանս կամ զԳրուսիացիս Պալչիկ ծովու, որք Բուսերանիոյ և Բրուսիոյ Սլաւ Ժողովրդոց մնացորդքն են. և որոց թուոյն վրայ չեմք կրնար ճիշտ գաղափար տալ, խառնուած ըլլալնուն համար այն կողմերը հաստատուած գերմանական ժողովրդոց հետ. զժուարին է զարձեալ ճշդիւ կամանալ թէ ուր կը լիննայ գերմանական երկիրն և ուր կը սկսի սլաւականը: — Արևելեան Կալիցիոյ մէջ կը գտնուին և Հուդեանք խառնեալք ընդ Լեհացիս, և կոչին Կարմիր Ռուսք, վասն զի ուսական երեք խումբերէն մէկուն կը վերաբերին, որք կոչին Սպիտակ Ռուսք, Սեալ Ռուսք և Կարմիր Ռուսք: Թիւերնին 3,000,000 է, և կը բնակին յարևելակողմն Կալիցիոյ, և Հունգարիոյ հիւսիսային արևելեան կողմը:

Եթէ հարաւակողմը ինչամբ և մտնեամբ խալական Ալպեայց, կը գրանեմք և անդ զանազան Սլաւ Ժողովրդոց խումբեր: Սլովէնք՝ որ գրեթէ 1,500,000 հոգի են և կը բնակին 'ի Գառնիոյ, յիտարիա, 'ի Գարինթիա և 'ի Սլովէնիա, և թուի թէ հաստատուած ըլլան անդ Քրիստոսի թուականին առաջին դարուն: Ապա կու գայ Եուկոյ-Սլաւեանց մեծ խումբն, որ ունի ընդ իւր գլխաւոր և զՍերվիացիս. առաջինքն 1,900,000 կը համուին, և կը բնակին 'ի խուաղաստան, 'ի Սլաւոնիա, 'ի Տալմացիա, և յերկիրն Չիւնուրական Սահմանաց: Իսկ երկրորդքն որոց թիւը 4,500,000 է, կը բովանդակեն նախ զրուն Սերվիացիս՝ 3,200,000, որք կը բնակին 'ի Սերվիա և 'ի Պանաղպազ զՊոնիսացիս և զբնակիչս Հերձեկովիոյ՝ 1,000,000, և զՍլեաւեոնցիս որք 150,000 հոգի են, և զմի մասն Տալմաղաց: — Ետքը կու գայ կէս մը սլաւայեալ ուրիշ ցեղ, և են Բուլղարք՝ 4,000,000ի չափ. որք գրաւած են զԲուլղարստան և զմի մասն

Թրակիոյ ու Մակեդոնիոյ: Վերջապէս անելի ևս հարաւակողմն ինչեւով կը գտնեմք անդ զՅոնս և զԱլպանիացիս, որ թուի թէ հասարակաց ընդհանուր ցեղի մը ներքոյ անկանին, և կապուած են յերկար ժամանակաց անտի սլաւեան ազգին հետ բարուց և կրօնից մերձաւորութեամբ: Յոյք որոց թիւն 3,600,000 է, կը գրաւեն զրուն Յունաստան, զՔեսալիա, զՄակեդոնիա, զմի մասն Թրակիոյ, զԿալիսոս, և զկղզիս Արշիպելագոսի, 'ի բաց թողլով զասիաբնակ Յոնս: Իսկ Ալպանիացիք որք 1,450,000 հոգի են, կը գրաւեն զրուն Ալպանիա և զմի մասն Եպիւրոսի:

Սլաւաց, Բուլղարաց, Ալպանիացոց և Յունաց հետ խառնեալ կան գրեթէ 1,000,000ի չափ ալ Մահմետականք, որ ցրուած են Օսմանեան պետութեան երկիրն զանազան կողմերը, առանց մասնաւոր տեղ գրաւելու: Դանուբի երկու ափանց վրայ, և առաւելապէս յաջակողմը, 'ի մէջ Մորաւաց և Սլովենաց, կան 7,500,000ի չափ Գերմանացիք, զգրաւելով զրուն Աւստրիա, Ղրիբոլ, զՄալցալորկ և Գարինթիոյ ու Սլովիոյ մեծագոյն մասը. սակէջ զաս ցրուած են զարձեալ և Աւստրիոյ կայսերութեան աշխարհին ամեն կողմերը, 'ի մէջ Մաճար, Սլաւ և Ռումէն ժողովրդոց: Ապա կու գան Հունգարացիք կամ Մաճարք, որոց թիւն է 5,000,000, և կը գրաւեն զրուն Հունգարիա և փոքրագոյն մաս մը 'ի Գրանիւլվանիա և 'ի Պանաղ: Այս ամեն ժողովուրդներէն ետքը կու գան Ռումէնք՝ 2, 8,500,000:

1 Եթէ հաշուելու ըլլային բոլոր Բուլղարներն որ կը բնակին Օսմանեան պետութեան զանազան գաւառաց մէջ, 'ի Ռումելիա, և 'ի հարաւային Ռուսաստան, թիւերնին շատ աւելի կ'առէր, բայց մինչ բուն Բուլղարիոյ բնակչաց թիւը միայն գրած եմք:

2 Ինչ որ ըսինք Բուլղարաց համար՝ նոյնք Ռումէնաց համար ալ կ'ըսեմք: այսինքն՝ և թէ Թուրքիոյ զանազան գաւառաց և Սերվիոյ մէջ առարժուած բոլոր Ռումէն Ժողովուրդներն մէկտեղ հաշուելու ըլլայց, ամբողջական թիւն գրեթէ 11 միլիոնի կը հասնի:

որք կը գրաւեն երկու գաւառ 'ի Մու-
տավիա և 'ի վալարիա, կամ զազաւան
Ռուսներն, զՊուրփինա, զՊեստարա-
պիա, զԻրանսիլիանիա և զՊանադ :

Այս է հաւառակ արեւելեան Եւրո-
պիոյ ժողովրդոց ցուցակն, յորում կը
տեսնայ ամենայն ոք Սլաւ ցեղին բազ-
մութիւնը . որ օր քան զօր ոչ թէ միայն
անկու այլ և յառաջագիմելու վրայ է,
և կը ջնայ անկորուստ պահել իր ազ-
գութիւնը, թէ և երեք մեծագոր ինք-
նակալութեանց տակ են :

ՍՈՒԷՉԻ ԶՐԱՆՑԻՆ ՈՒ ՔԱՂԱՔՆ .

Սուկէց գրեթէ քսան տարի առաջ
Եգիպտոս ճանապարհորդելն դժուա-
րին՝ մանաւանդ թէ վտանգաւոր իսկ
համարուած էր . վասն զի ստիպեալ էր
ուղևորն մեծատարած անտապտից բու-
ցատոչոր աւազուց մէջէն անցնիլ, և
հետևիլ նքթեալ ու ծարաւահիւծ՝ չըն-
չասպառու ուղտի մը դանդաղաչարժ
քայլիցը . բայց ահաւորն այն էր որ
միշտ առաջի աչաց պիտի ունենար
զմահ՝ 'ի տես սկիորոտեաց աստ անդ-
լունելոց, և կրացելոց ու՝ օպիտակա-
ցելոց 'ի ճառագայթից հրատոչոր արե-
գական, որոնք ողորմ ու ցաւալի տե-
սարան ընծայէին ամենայն անցորդաց :
Եւ այս խեղճութեան տեսարանն աւե-
լի ևս կը սաստկայնէր անգեղց ու ար-
ժուոց բազմութիւնն, որ անյազու-
թեամբ ձեռք բերած որսերնին վայե-
լած տտննին, կատաղութեամբ ու
սպառնալեզք կը հեռանային անկէ 'ի
մեր ձենայ կարաւանին :

Բայց ինչպէս դէմ ընդդէմ զարմա-
նայի կերպով կը փոփոխի աշխարհաց
ու տեղեաց վիճակը : Այն որ երբեմն
անապատն էր՝ փոխուեցաւ և եղաւ
զուարճալի ուսուիս, տանելով անդանօր

քաղաքականութեան ամենայն նըր-
բաճաչակ դիւրութիւնները : Անդ ուր
կը լուսաւորէր երբեմն արեգակն ան-
սահման՝ անձայն ու անընակ անա-
պատներ, կը լուսաւորէ հիմա գեղեց-
կաչէն ու հանգիստ բնակարաններ
և արտօրայք : Անդ ուր երբեմն ան-
մխիթար տխրութիւն մը տիրած էր բու-
լոր բնութեան վրայ, փոխանակեց հի-
մա խնդութիւն . ստուերաչառք պար-
տէղներ, ծառազարդ ճամբաներ, չրոց
ցայտմունքներ, և մարդայատ ու հիւր-
ընկալ ժողովուրդներ : Ահա այսպէս
կերպարանափոխեցաւ ամբողջ աշխարհ
մը, անյողդող մարդու մը հաստա-
տուն կամքովը և աննրկուն արիու-
թեամբը՝ յաղթելով նոյն իսկ և բնու-
թեան զօրաւոր արգելիցը :

Այս անձն է Լրութեա գաղղիացին,
որուն անունն և որպիսի ոք ըլլալն հր-
դէն ծանօթ է ամենպէս, որ իր հրա-
չալի աշխարհօգուտ գործոյն ձեռնար-
կութեամբը և յաճողութեամբը անմա-
հացուց ոչ միայն իր անունը այլ և մեր
ժամանակը ու գարը : Սուէչի ջրանց-
քին գերազանցութիւնը լաւ ևս կ'ըմ-
բռնենք եթէ մտածելու ըլլամք քաղա-
քական ու վաճառականական այն օ-
գուտներն ու յառաջագիմութիւնն՝ որ
պատճառեց բոլոր աշխարհի . անանկ
որ նոյն ջրանցքէն անցնող վաճառուց
գինն կ'ըլլայ ամեն տարի աւելի քան
զերկու միլիարտ, և օր քան զօր աճելու
վրայ է : Հաղորդակցութեան դիւրին
դուռ մ'եղաւ ընդ մէջ Ասիոյ և Եւրո-
պիոյ, իբրև շղթայ՝ 'ի ժի միայնող
աշխարհիս երկու գլխաւոր և կտրելոր
մասերն : Այս նոր ճանապարհն ծո-
վային շահուց ամենէն մեծն է, օգտա-
կար անխտիր ամենայն ազգաց, ըստ
տանելոյ իւրաքանչիւրոց աշխարհա-
գրական դրիցը . մօտեցուց զԱնգղիա՝
Հնդկաստանի . բացաւ Գերմանիոյ
դուռն՝ ազատ նաւարկութեան ընդ
Դանուք . ընդլայնեց ու տարածեց
Դրիէսգի, ձենավայի, Մարսիլիոյ, Վե-
ներտոլոյ և բոլոր իտալական ու գաղ-
ղիական նաւահանգստաց վաճառա-